**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2021 թվականի
փետրվարի 11-ին

## ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.**

1. Սույն օրենքը կարգավորում է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հարկ վճարող) համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու ու արտոնությունների կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում փաստացի գործունեություն իրականացրած այն հարկ վճարողների վրա, որոնց նկատմամբ «Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ հարկային արտոնություններ սահմանելու մասին» օրենքով հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ չեն սահմանվել:

**Հոդված 2.**

1. Սույն օրենքի գործողությունը սույն օրենքով սահմանված դեպքերում ու կարգով տարածվում է այն հարկ վճարողների վրա, որոնք սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված ժամկետում ունեն շահութահարկի, եկամտահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, հաստատագրված վճարների, առևտրի հարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների), տարեկան պետական տուրքի ու բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով ապառքներ, տույժեր և (կամ) տուգանքներ, ինչպես նաև հարկային օրենսդրությունը խախտելու համար սահմանված տուգանքներ (բացառությամբ օրենքով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար սահմանված տուգանքների), «Հսկիչ-դրամարկղային

մեքենաների կիրառման մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին» օրենքների պահանջների խախտման համար սահմանված տուգանքներ (այսուհետ՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություն):

**Հոդված 3.**

1. Մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով մինչև 10 000 000 ՀՀ դրամ ներառյալ ապառքներ (այդ թվում՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ստուգման ակտերով) ունեցող հարկ վճարողներն ազատվում են սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված ապառքների, տույժերի և (կամ) տուգանքների վճարումից:

2. Մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով 10 000 000 ՀՀ դրամը գերազանցող ապառքներ (այդ թվում՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ստուգման ակտերով) ունեցող հարկ վճարողներն ազատվում են սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված տույժերի և (կամ) տուգանքների վճարումից: Սույն մասում նշված հարկ վճարողներն ազատվում են նաև սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված՝ 10 000 000 ՀՀ դրամ գումարի չափով ապառքների վճարումից՝ 10 000 000 ՀՀ դրամը գերազանցող ապառքները սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ժամանակացույցով և կարգով մարելու, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ժամանակացույցի ավարտին ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ չունենալու դեպքում:

3. 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հարկային և այլ պարտադիր վճարների գծով բացառապես տույժեր և (կամ) տուգանքներ (այդ թվում՝ ստուգման ակտերով) ունեցող հարկ վճարողներն ազատվում են սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված տույժերի և (կամ) տուգանքների վճարումից:

4. Սույն հոդվածում նշված հարկ վճարողների կողմից 2020 թվականի հոկտեմբերի 1-ից հետո սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված ապառքները, տույժերը և (կամ) տուգանքները կամ դրանց մի մասը վճարած լինելու դեպքում հարկային մարմնի կողմից կատարվում է վերահաշվարկ, և ավել վճարված գումարները հաշվանցվում և

(կամ) հարկ վճարողին վերադարձվում են «Հարկերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն:

5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հարկ վճարողների կողմից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կատարված ձեռքբերումների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների մասով հետաձգված ավելացված արժեքի հարկի գումարների գծով 2020 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի հունվարի 1-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներով հաշվանցումներ կատարելու և դեբետային մնացորդ հայտարարագրելու դեպքում ապառքի գումարը մարվում է՝ հաշվի առնելով դեբետային մնացորդը: Սույն մասում նշված դեպքում հարկային մարմնի կողմից տասնօրյա ժամկետում հարկ վճարողի մոտ իրականացվում են ուսումնասիրություններ:

6. Եթե հարկ վճարողի հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մասով առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը գտնվում է հարկադիր կատարման ընթացքում, ապա հարկային մարմինը սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերում նշված պահանջները բավարարող հարկ վճարողների մասով սույն օրենքով սահմանված արտոնությունը կիրառելուց, իսկ սույն հոդվածի 2-րդ մասում նշված հարկ վճարողների մասով ժամանակացույցը կնքելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ համապատասխան կատարողական թերթը վերադարձնելու և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի համաձայն կատարողական վարույթն ավարտելու համար: Սույն մասով նախատեսված դեպքերում հարկային մարմնի դիմումով ավարտված կատարողական վարույթների վրա չի տարածվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջը:

**Հոդված 4.**

1. Հարկային մարմինը մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ ունեցող հարկ վճարողներին փոստային կապի ծառայության (հետադարձ ծանուցմամբ) կամ անհատական հանձնման միջոցով տրամադրում է

ծանուցում՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մարման ժամանակացույց կնքելու և սույն օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու հնարավորության մասին:

2. Ծանուցումն ուղարկվում է կազմակերպության գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրի կամ հարկային մարմնին հայտնի՝ կազմակերպության կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) այլ հասցեով:

3. Ծանուցումը համարվում է պատշաճ, եթե այն ստորագրությամբ հանձնվել է կազմակերպության ներկայացուցչին կամ ֆիզիկական անձին (անհատ ձեռնարկատիրոջը) կամ վերջինիս ներկայացուցչին:

**Հոդված 5.**

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հարկ վճարողները կարող են մինչև 2021 թվականի մարտի 10-ը դիմել իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ սույն օրենքին համապատասխան հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մարման ժամանակացույցի հաստատման համար:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ ձևով չծանուցված հարկ վճարողի պատասխանատու պաշտոնատար անձինք (տնօրեն, կառավարիչ և այլն) կարող են իրենց հաշվառման վայրի հարկային մարմին դիմել մինչև սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամանակացույցի մարման վերջնաժամկետները:

**Հոդված 6.**

1. Հարկային մարմինը տասն աշխատանքային օրվա ընթացքում սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հարկ վճարողի դիմումի հիման վրա վերջինիս հետ կազմում է ժամանակացույց, որով հարկ վճարողը պարտավորվում է վճարել սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքները հետևյալ կարգով.

1) մինչև 3 000 000 ՀՀ դրամ (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառք ունեցող հարկ վճարողներն ըստ սահմանված

ժամանակացույցի մարում են գումարները սկսած 2021 թվականի մարտի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի գումարի՝ առանց արտոնության գումարի, առնվազն մեկ տասներկուերորդ մասը.

2) 3 000 000 ՀՀ դրամից մինչև 10 000 000 ՀՀ դրամ (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառք ունեցող հարկ վճարողներն ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները սկսած 2021 թվականի մարտի 1-ից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի գումարի՝ առանց արտոնության գումարի, առնվազն մեկ քսանչորսերորդ մասը.

3) 10 000 000 ՀՀ դրամից մինչև 30 000 000 ՀՀ դրամ (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառք ունեցող հարկ վճարողներն ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները սկսած 2021 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի գումարի՝ առանց արտոնության գումարի, առնվազն մեկ երեսունվեցերորդ մասը.

4) 30 000 000 ՀՀ դրամ և ավելի (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառք ունեցող հարկ վճարողներն ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները սկսած 2021 թվականի մարտի 1-ից մինչև 2025 թվականի փետրվարի 28-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի գումարի՝ առանց արտոնության գումարի, առնվազն մեկ քառասունութերորդ մասը.

5) սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում հարկ վճարողները, կախված հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի գումարի մեծությունից, ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները սկսած հաշվառման վայրի հարկային մարմին դիմելու ամսվանից մինչև սույն մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերում սահմանված ժամկետը՝ յուրաքանչյուր ամիս հավասարաչափ վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի գումարը՝ առանց արտոնության գումարի:

**Հոդված 7.**

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածում նշված ժամանակացույցի առաջին իսկ խախտման դեպքում ժամանակացույցը համարվում է խզված, և հարկային մարմինը կիրառում է օրենքով սահմանված՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների հարկադիր կատարման միջոցներ, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում՝ տասնօրյա ժամկետում կատարողական թերթը ներկայացնում կատարման:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածում նշված ժամանակացույցի գործողության ընթացքում հարկ վճարողների կողմից հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող ճշտված հաշվարկ-հաշվետվություններ ներկայացվելու դեպքում հարկային մարմնի կողմից հարկ վճարողների մոտ տասնօրյա ժամկետում իրականացվում են ուսումնասիրություններ:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածում նշված ժամանակացույցի գործողության ընթացքում հարկ վճարողների կողմից ժամանակացույցում չընդգրկված ժամանակաշրջանների համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով ժամկետանց պարտավորություններ ունենալու դեպքում հարկային մարմինը կարող է կիրառել օրենքով սահմանված՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների հարկադիր կատարման այլ միջոցներ:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություն ունեցող այն հարկ վճարողները, որոնց նկատմամբ ներկայացվել են բռնագանձման հայցեր, կարող են հարկային մարմնի հետ կնքել հաշտության համաձայնություն:

**Հոդված 8.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում նշված հարկ վճարողների նկատմամբ նույն մասերով սահմանված արտոնությունները, ինչպես նաև 3-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հարկ վճարողների նկատմամբ նույն մասի 1-ին

նախադասությամբ սահմանված արտոնությունները հարկային մարմնի կողմից կիրառվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում արտոնությունը կիրառելու նպատակով հարկային մարմնի կողմից տասնօրյա ժամկետում ուսումնասիրություններ են իրականացվում այն հարկ վճարողների մոտ, որոնց կողմից 2020 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացվել են հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող ճշտված հաշվարկ-հաշվետվություններ, որի հետևանքով բավարարում են սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021 թ. փետրվարի 19
Ստեփանակերտ
ՀՕ-26-Ն